ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2025 թվականի № 348-Ա

ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի № 1239-Ն որոշման հավելվածի 4-րդ և 22-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի օգոստոսի 25-ի № Ն/1090-2025 զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար ***Լևոն Պետրոսյանին*** 2025 թվականի օգոստոսի 26-ին, մեկ օրով գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի հարցազրույցը անցկացնող հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

2. ***Լևոն Պետրոսյանի*** գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ ***Վահագն Նազլոյանի*** վրա:

3. ***Լևոն Պետրոսյանի*** գործուղման վայր փոխադրումը կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի հաշվեկշռում հաշվառված «***TOYOTA CAMRY 2.5 GAS***» մակնիշի ***908 HI 61*** ավտոմեքենայով:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)*՝ գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար ***Լևոն Պետրոսյանին*** գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց

հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին ներկայացնել գործողման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 25
ք. Հրազդան